ԿԱՐԾԻՔ

Նարինե Ռաֆիկի Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» խորագրով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Նարինե Մատինյանի ատենախոսությունը նվիրված է մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկին՝ ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման ուղիների մշակմանը: Ժամանակակից կրթական համակարգում գերակա խնդիր է ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակի նկատմամբ պահանջների վերափոխումը՝ կրթության ժամանակակից հարացույցերի համատեքստում: Այս տեսանկյունից կրթության շահառուների պահանջմունքները բավարարելու համար արդիական է դառնում մասնագիտական առանցքային կոմպետենցիաների ձևավորումը, մշակվում են ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացման նոր մոդելներ, որոնցից է նաև ռեֆլեքսիվ կոպետենցիան: Այն իրականում ուսուցչի կողմից սեփական գործունեության վերահսկումն ու գնահատումն է և անմիջականորեն կապված է ուսումնադաստիարակչական գործընթացում մանկավարժական խնդիրների լուծման ավարտական փուլի հետ:

Մասնագիտական կրթության բարեփոխումների արդի փուլում ակներև է դարձել, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացման որոշ տեսանկյուններ տակավին խոր ուսումնասիրման, նորովի իմաստավորման և մեթոդաբանական հիմնավորման կարիք ունեն:

Այս տեսանկյունից քննարկվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որի նպատակը ուսուցչի մասնագիտական պատրաստության և շարունակական վերապատրաստման ընթացքում ռեֆլեքսիվ կոպետենցիայի զարգացման արդյունավետ մոդելի մշակումն է:

Հետազոտությունը գրված է տրամաբանորեն ծրագրված պլանով, ունի սոցիալ-մանկավարժական նշանակություն: Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների

զարգացման հիմնահարցերը դիտարկվում են նրա սոցիալական ակտիվության, հանրամշակութային իրազեկության, ինքնառեֆլեքսիայի, ինքնազարգացման, կրթական գործընթացի կազմակերպմանը կոմպետենտային, գործունային մոտեցումների հայեցակարգային շրջանակներում:

Ատենախոսության գիտատեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման հիմնախնդիրը մակարդակային տիրույթում մանկավարժահոգեբանական, մասնագիտական, կոմպետենտային, մեթոդական տեսանկյուններից դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ:

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, միմյանց լրացնող և միմյանցից բխող երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Հետազոտության արժանահավատությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են տեսական-մեթոդաբանական հիմքը կազմող փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական արդի հայեցակարգերի, մասնագիտական գրականության համալիր վերլուծությամբ, փորձարարական հետազոտության արդյունքներով:

«Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները» խորագրով առաջին գլխում քննարկված են հետազոտության հիմնախնդրին առնչվող մի շարք հիմնահարցեր: Հանգամանալից վերլուծված են արդի փուլում ուսուցչի մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորման և զարգացման հիմնախնդրի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումները, տեսություններն ու հայեցակարգերը: Հանգամանալից դիտարկված են պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում հայ և արտերկրի փիլիսոփայական ու մանկավարժական մտքի պատմության մեջ անձի ռեֆլեքսիայի ընդունակության վերաբերյալ ըմբռնումները: Մեկնաբանված են հիմնախնդրին առնչվող՝ «ռեֆլեքսիա», «մանկավարժական ռեֆլեքսիա», «անձնային ռեֆլեքսիա», «մասնագիտական ռեֆլեքսիա», «ռեֆլեքսիվ միջավայր» «ռեֆլեքսիվ հմտություն», «ռեֆլեքսիվ կոմպետենտություն» առանցքային հասկացությունները, բնութագրված է դրանց հարաբերակցությունը: Ներկայացված են ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման գիտամեթոդական նախադրյալները, գործոնները:

Ատենախոսի կողմից ռեֆլեքսիան դիտարկվում է տարբեր առարկաների ուսուցման, ինչպես նաև մասնագիտական և անձնային, միջանձնային հարաբերությունների հաստատման, կարգավորման մակարդակներում:

Դիտարկված և բնութագրված են մասնագիտական մանկավարժական ռեֆլեքսիայի կառուցվածքը և բովանդակությունը, գործառույթները, ձևավորման մանկավարժական պայմանները

Հետազոտության հիմնախնդրի մեթոդաբանության տեսանկյունից վերոբերյալի բովանդակային և գործառնական հիմունքների քննությունը ևս ուշագրավ վերլուծություններ է պարունակում ռացիոնալ-տրամաբանական և անձի հոգեբանական կայունության, մասնագիտական մտածողության, մանկավարժական գործունեության բովանդակային նոր բնութագրերի, սոցիալական փորձի ձեռք բերման, ռեֆլեքսիվ խոսույթի ուսուցման, համագործակցային կարողությունների և ռեֆլեքսիայի պահանջմունքի ձևավորման վերաբերյալ:

Առաջին գլխի վերլուծություններն ուղենիշային նշանակություն ունեն ոչ միայն մասնագիտական ռեֆլեքսիայի հմտությունների ձևավորման ու զարգացման տեսանկյունից, այլև, առհասարակ, ուսուցչի կողմից նշված հասկացությունների էության, կառուցվածքի ընկալման և յուրացման առումով:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված է ուսուցչի հաղորդակցական ռեֆլեքսիայի զարգացման ռազմավարությունը, դիտարկված են ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի զարգացման մոդելները, ներկայացված և գիտականորեն հիմնավորված է ատենախոսի կողմից մշակված ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման քառաստիճան մոդելը իր կառուցվածքային բաղադրիչներով: Բնութագրված են ռեֆլեքսիվ միջավայրի ձևավորման մանկավարժական պայմանները, ռեֆլեքսիայի կազմակերպման ձևերն, գործառույթներն ու փուլերը:

Երրորդ գլխում՝ «Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը», ատենախոսի կողմից մասնակիորեն ներկայացված են ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման արդյունավետությունն ապահովող տեխնոլոգիաները, փոխներգործուն

մեթոդները:Մասնավորապես ընդգծվել է ուսուցչի ֆասիլիտացիոն գործառույթի նշանակությունն ուսուցման փոխներգործուն և ռեֆլեքսիվ միջավայրի ձևավորման գործում: Բնութագրված և վերլուծված են ուսուցչի ռեֆլեքսիայի մակարդակի որոշման մի շարք մեթոդիկաներ:

Հետազոտությունը եզրափակում է ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը: Առաջարկված ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մակարդակի որոշման մեթոդիկան հետաքրքիր և արդյունավետ է տեղեկատվական և դիդակտիկական տեսանկյունից: Արդյունքները համապատասխանում են հետազոտության տրամաբանությանը: Մշակված հարցաթերթիկներն ընդգրկուն են, հարցերին տրված պատասխանները հանգամանալից վերլուծվել և համակարգվել են ըստ իմաստային-բովանդակային դրսևորումների:

Տեսական և գործնական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա առանձնացվել են ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մակարդակները, դրանք բնութագրող չափանիշներն ու ցուցանիշները:

Ներկայացված տրամագրերը տեսական և գործնական հետազոտության վերլուծական-գնահատողական ամփոփումն են, արժևորում են հեղինակի եզրակացություններն ու փորձարարության արդյունքները, մշակված մեթոդիկայի և մոդելի մանկավարժական արդյունավետությունը:

Աշխատանքի ընդհանուր արժանիքների թվում պետք է նշել, որ այն տրամաբանորեն ավարտուն է, ինքնուրույն, ամբողջական, համակարգված և պարունակում է հիմնախնդրի շրջանակներում արժեքավոր տեսական վերլուծություններ, ունի գիտական նորույթ, կիրառական նշանակություն: Հիմնախնդրի ոլորտում ստացվել են գիտամեթոդական հիմնավորված արդյունքներ, որոնք նոր մոտեցումներ են ուսուցչի մասնագիտական պատրաստության, վերապատրաստման, ռեֆլեքսիվ կոմպետենցիայի, մասնավորապես մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների արդյունավետ ձևավորման և զարգացման առումով: Ատենախոսությունն արտացոլում է հեղինակի մեթոդաբանական,

մասնագիտական, հոգեբանամանկավարժական գիտելիքներն ու գիտահետազոտական կարողությունները, հիմնախնդրի ոլորտում աշխատանքային բազմամյա փորձը:

Ատենախոսի տպագրված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այնուհանդերձ կուզենայինք ներկայացնել որոշ թերություններ՝

1. Ատենախոսությունը գերծանրաբեռնված է մասնագիտական ռեֆլեքսիայի բութագրման, ուսուցչի մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորման և զարգացման մոդելների, դրանց ձևավորվածության մակարդակների, գործառույթների նկարագրությամբ ու վերլուծությամբ, սակայն ոչ մի տեղ չի երևում դրանց նկատմամբ ատենախոսի անձնական կարծիքը կամ մոտեցումը, կամ դրանցից որ մեկն է նախընտրել որպես իր առաջարկած մոդելի հիմք:
2. Հետազոտության նպատակն է ստեղծել ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման արդյունավետ մոդելը, որը հետազոտության խնդիրներում մասնակիորեն է արտացոլված: Մինչդեռ մշակված մոդելը պետք է լիարժեքորեն արտացոլվեր խնդիրներում, քանի որ այն ատենախոսության նշանակալի գործնական արդյունքն է և գիտական նորույթը:
3. Առկա է անհամապատասխանություն երկրորդ գլխի խորագրի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման մոդելը» և մշակված մոդելի անվանման միջև. «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման քառաստիճան մոդելը», որը, կարծում ենք, անփութության հետևանք է:
4. Հետազոտության առարկան ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիներն են շարունակական կրթության համատեքստում: Ատենախոսության 91-րդ էջի թիվ 1 տրամագրում ներկայացված են մասնագիտական ռեֆլեքսիվ զարգացման ուղիները, որոնց մասին այդ ենթագլխում ոչ մի խոսք չկա:Չի երևում դրանք հեղինակի կողմից են մշակվել, թե մեկ ուրիշի: Եվ, ընդհանրապես, գծապատկերների և տրամագրերի

մասին որևէ հղում չկա. օրինակ, թե ինչու է նշված տրամագիրը հենց այդ էջում տեղադրված:

5. Մեր կարծիքով աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը ներկայացներ իր կողմից մշակված ռեֆլեսիվ առաջադրանքների, գործնական պարպմունքների թեմատիկա, որոնք կլինեին մշակված մոդելի կարևորագույն բաղադրիչը և կարող էին ներդրվել դպրոցում սկսնակ ուսուցիչների հետ տարվող աշխատանքներում:
6. Ատենախոսությանում առկա են անիմաստ ձևակերպումներ, օտարալեզու բառեր, որոնց հայերենի թարգմանությունները շատ իմաստալից են հնչում, առկա են նաև համակարգչային բազմաթիվ վրիպակներ:

Նշված թերություններն, իհարկե՛, չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը:

Այսպիսով, Նարինե Ռաֆիկի Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն եվ պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր **Լ.Թ.Ասատրյան**

Պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտքարտուղար,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Մ. Մ. Իսպիրյան**

18.06.2022թ.